Հավելված N 3
ՀՀ կառավարության 2024 թվականի
ապրիլի 4-ի N 479-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԵԽԱՅԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Երեխային աջակցություն տրամադրելիս պարտադիր է ապահովել սույն որոշման N 1 հավելվածի 3-րդ կետով նախատեսված սկզբունքները:

2. Աջակցությունը կիրառվում է բռնության ենթարկված երեխայի ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնությամբ՝ երեխայի կարիքների գնահատման հիման վրա: Բռնության ենթարկված երեխայի ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնությունը չի պահանջվում սույն որոշման N 1 հավելվածի 9-րդ կետով նախատեսված դեպքերում: Բռնության ենթարկված երեխային աջակցությունը տրամադրելիս աջակցություն կարող է տրամադրվել նաև նրա ընտանիքին՝ ընտանիքի կարիքները գնահատելուց հետո:

3. Խնամակալության և հոգաբարձության մարմինները, երեխայի նկատմամբ բռնության մասին տեղեկությունը ստանալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան հինգ, իսկ կյանքը կամ առողջությունը վտանգող կամ դրա իրական սպառնալիք ստեղծող դեպքերում՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ապահովում են աջակցության տրամադրումը կամ կազմակերպում են այդ աջակցության տրամադրումը՝ բռնության ենթարկված երեխային ուղղորդելով ուսումնական հաստատություն կամ երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն կամ բժշկական օգնություն կամ սպասարկում իրականացնող կամ ցերեկային հաստատություններ:

4. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով արտահիվանդանոցային ու հիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման:

5. Երեխաների խնամքը, ներառյալ՝ համապատասխան հաստատություններում, կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշմանը համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

05.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ